

լրագիրը թէև առանց անունը յիշելու, որ քաջութիւն ունեցաւ այս ազեղ երևոյթները կամաց կամաց մերկացնել, Մի՛թէ այս չի նշանակոււմ, որ լրագիրը կորցրել է ուղին և չգիտէ ում պաշտպանի կամ ում պախարակի:

Ձեր համակրողներից մէկը:

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿՍՅՈՒ ԻՆՆՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ**

Այս տարի լրանում է մեր «Տրեշտակակրօն» բանաստեղծ ա. Գրիգոր Նարեկացու մահուան իննհարիւրամեակը, որի առթիւ մի գեղեցիկ յօդուած է նուիրել «Իւզանդիօն» հայաթերթը իւր 2031 համարում:

Ո՛վ ծանօթ չէ այդ պաշտելի անուան, ով բերան չգիտէ գէթ մի բանի տուն հանրածանօթ «Նարեկ» աղօթագրքից, որ ինչպէս ասում է յիշեալ յօդուածագիրը, «ամեն կրօնասէր Հայու համար երկրորդ Աւետարանի մը արժէքն ունի»:

Ս. Գրիգոր Նարեկացին թաղուեցաւ իւրանուն վանքի մէջ Շատախի կողմերը և վերջը նորա նշխարները, որպէս սրբի մասունք, տարուեցան այս և այն կողմերը: Այժմ գրեթէ որոշ յայտնի չէ նորա գերեզմանը, որպէս զի ի յիշատակ այս մեծ յօբելեանի՝ գէթ մի մահարձան կանգնեցնէինք նորա շիրմի վերայ, միայն ցոյց են տալիս աւանդութեամբ մի տեղ, ուր պիտի թաղուած լինի նա:

Բայց եթէ չենք կարող մահարձանով կամ մի մեծ տօնախմբութեամբ պատուել նորա յիշատակը՝ գէթ անմահացնենք հոգիացեալ բանաստեղծին նորա կեանքի և երկասիրութեանց մի հիմնական և լուրջ ուսումնասիրութեամբ:

**«ԼՈՒՍՏԱԲԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՒՎՔԱԾՈՅ» ԿԻՊՐՈՍՈՒՄ**

Կիպրոսի Նիկոսիա քաղաքից մեզ հանդորդում են որ Հայաստանեայց քրիստոնէական լուսաւորութեան և Ս. Էջմիածնի մայր տաճարի հիմնարկութեան Հազարվեցհարիւրամեակի յիշատակին՝ Կիպրոսի Ազգային Կրթարան—Որբանոցի տրպարանից ներկայ տարւոյս ընթացքում պիտի հրատարակուի **ԼՈՒՍԱԸՆՐ** տիտղոսով մի հատոր,—հաւաքածոյ ազգային, եկեղեցական, պատմական, բարոյական և բանասիրական ուսումնասիրութեանց հետևեալ ծրագրով:

1. Քրիստոնէութեան ազդեցութիւնը արդի քաղաքակրթութեան վրայ:
2. Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը և գործունէութիւնը:



3. Հայոց մէջ Քրիստոնէութեան ծաւալումը դիւրացնող քաղաքական, ընկերական և այլ պատճառները:
4. Հայ եկեղեցւոյ դաւանական և վարչական տարբերութիւնը յոյն և լատին եկեղեցիներէն:
5. Հայոց եկեղեցական ժողովներու ամենէն նշանաւորները:
6. Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ ամենէն մեծ դէմքերը և ամենէն կարևոր թուականները:
7. Մեր կրօնական գրականութեան ամենէն հին արտադրութիւնները:
8. Եկեղեցական նուիրապետութեան բարոյական իշխանութիւնը զօրացնելու պայմանները:
9. Հայ ժողովուրդի վրայ իր եկեղեցւոյ հոգեկան և բարոյական ներգործութիւնը պէտք եղածին պէս զգալի և օգտակար ընել տալու միջոցները:
10. Քննութիւն մը մեր ազգային բարոյականին վրայ:  
(Մեր մէջ հաւատարմութեան, պարտաճանաչութեան, աշխատասիրութեան, խնայողութեան և այլասիրութեան չափը.— Հաւաքական գործունէութեանց մէջ համերաշխութիւնը և «Նա» ը: Բարեգործութեան դէմ երախտագիտութեան համեմատութիւնը.— Ազգային վարչական շրջանակաց մէջ կարգապահութեան ոյժը և պետերու և ստորակարգեալներու յարաբերութիւնը.— Մեր հանրային գործերու մէջ արժանիքի վարձատրութիւնը և յանցանքի պատիժը.— Ընտանեկան կեանքի մաքրութեան տոսիճանը.— Խմիչքի, թղթախաղի և ընդհանրապէս զուարճասիրութեանց ստացած ծաւալը, ևն ևն):
11. Մեր նոր սերնդին ստացած Դաստիարակութեան Տեսնակը: Նկարագրի կազմութեան մասին Ուսուցիչներու կատարած դերին բնութիւնը:
12. Արդի հայ մամուլին ազդեցութիւնը մտաւորական և բարոյական մշակութեան տեսակէտով:
13. Ներկայ 1600 ամեակի յիշատակին Գրիգոր Լուսաւորչի անունով մի ազգային բարեգործական ընկերութիւն և մի «Գանձանակ» հիմնելու հնարաւորութիւնը:

Հասցէ

Rédaction «Loussaper»  
Nicosia, Chypre.

## ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

Այս ասորի Վանայ մէջ կերպ. վարժարան մը բացուած է Հայկազեան անունով, որ արժանանալով Նորին Ս. Օծութեան Ազգի վեհաստիճան Հայրապետի Բարձրագոյն Հաճութեան ու հովանաւորութեան նպաստաւորուած է Ռուսմանեացի բարեխառակ Աղա Գրիգոր Սերերբնիբեանցի 12000 ռուպլի կտա-